# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՋՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք, հասցե գ.Ջրաշեն
հեռ. (060) 80-30-80
Էլ.Փոստ՝ jrashen.lori@mta.gov.am

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Ձեզ ենք ներկայացնում Լոռու մարզի Ջրաշեն համայնքի ղեկավարի 01.08.2018 թվականի թիվ 19 որոշումը:

Առդիր 2 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՈՒՌՈՒՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք,
հեռ.(060) 80-30-80

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**« 01 » օգոստոսի 2018 թվականի N 19**

**ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 06-095-0076-0007 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԱՅԱՆԵ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՆԿՈՒՂԸ ԵՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Լոռու Ջրաշեն համայնքի բնակիչ Գայանե Յուրայի Թադևոսյանը 23.07.2018 թվականին դիմումը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 06-095-0076-0007 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.104 հա սեփականաշնորհված հողամասի վրա հանգուցյալ ծնողներ՝ Յուրա Եփրեմի Թադևոսյանը և Մելսիդա Վարդանի Ալեքյանը 1996 թվականին կառուցել են ինքնակամ 23.63 քմ ավտոտնակ և 116.13 քմ բնակելի տան նկուղ, որը Լոռու մարզպետի 07.02.1998 թվականի թիվ 95 որոշմամբ սեփականաշնորհվել է վերջիններիս, սակայն պետական գրանցում չեն ստացել:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43 հոդվածով, <<Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների և օժանդակ շինությունների կարգավիճակի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, <<Ինքնակամ կառուցված շենքերի շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 510-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 204-րդ հոդվածի 2-րդ կետով, <<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրացման մասին>> օրենքի 2-րդ հոդվածի պահանջով, Հայաստանի Հանրապետության կառավարության 16.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ 22.1 կետով և հիմք ընդունելով Լոռու մարզպետի 07.02.1998 թվականի թիվ 95 բնակարանի սեփականաշնորհման մասին որոշումը, հողի բարեփոխումների և սեփականաշնորհման և տեղական հանձնաժողովի 05.04.1991 թվականի թիվ 130/9 որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 10.06.2010 թվականի թիվ 186-Ն հրահանգը, Արտյոմ Սաքանյան անհատ ձեռներեցի կողմից կազմված հատակագիծը, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ բնակելի տունը կառուցվել է որպես փոխհատուցում կորցրած բնակֆոնդի դիմաց և ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում, կառուցված է սեփական հողամասի վրա

Որոշում եմ.

1.Օրենքի ուժով օրինականացնել և ճանաչել Ջրաշեն համայնքում 06-095-0076-0007 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.104 հա սեփականաշնորհված տնամերձ հողամասի վրա կառուցված և ժառանգության իրավունքով ձեռք բերած Գայանե Թադևոսյանի սեփականության իրավունքը 116.13 քմ նկուղի, 23.63 քմ ավտոտնակի և 109.66 քմ բնակելի տան նկատմամբ:

2.Սույն որոշման մեկ օրինակը տրամադրել կադաստրի համապատասխան ստորաբաժանմանը որպես հիմք իրավունքի պետական գրանցման համար:

3.Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՈՒՌՈՒՍՅԱՆ